ՐԻՒ (գուցէ Խորիշահի կրճատումը) անունով, որ Արղութի հետ մասնակից էր հօր թողած «տէրութեան» իշխանութեան։

Այս հանգամանքը արժանի է առանձին ուշադրութեան եւ լուսաբանութեան, որ իսկապէս սովորական չէր մեր աւանդական կենցաղի և հասկացողութեան համար. Դոշ Մխիթարի Դատաստանագրքի երկրորդ մասի ԿԲ. եւ ԿԳ. գլուխները որոշ լոյս են սփռում այս երեւոյթի լուսաբանութեան նկատմամբ(*). աղջիկը հօր ժառանգն էր, եթէ չունէր եղբայր. Աւագի դուստրը Խոշաք ժառանգեց հօր իշխանութիւնն ու կալուածները, թէև յապաւումներով, որովհետև եղբայր չունէր, նորա զաւակները Սահիպ դուռանի ամուսնութիւնից ժառանգում են եւ յիշւում մօր հետ կամ առանձին(**)։ Աղջիկը եղբայրներ ունեցած դէպքում, կէսն է ստանում եղբօր կամ եղբայրների համեմատութեամբ. մարդու գնացած աղջիկն ստանում էր հայրական տանը եղած քրոջ բաժնի կէս չափով, բայց նա կարող էր գալ եւ իւր հօր ժառանգութեան մէջ ապրիլ ստանալով լուվին իրեն հասանելիք բաժինը։ Դոշ Մխիթարի կարծիքով տանը եղած աղջիկը «հաւասար եղբարցն ժառանգէ զհօրն։ Հաստատի ըստ այսմ որդւոց և դստերաց հաւասար լինել ժառանգութեան հօր»։ Բայց «թէպէտ բաժանորդք ընդ եղբարս ժառանգութեանն քորք են, այլ ոչ ժառանգապահք», որ հրատարակիչը գրչի սխալ է համարում եւ ճիշդ «աւանդապահք», յորժամ եղբարք լցեն»։

Խորիշ խաթունի յիշատակութիւնը որպէս տեղական պարոնութեան կամ իշխանութեան ներկայացուցիչ, կարելի է հասկանալ, երբ ընդունենք, որ նա ամուսնացած էր, եւ բնակութիւն հաստատած Գետիկում իւր որդոց հետ, և աւագը լինելով ճարի զաւակների մէջ, յիշւում է Արղութի հետ, որ իսկապէս իշխանութեան «աւանդապահն» էր։

(*) Բաստամեանի հրատարակութիւն, էջմ.։

(**) Օրբէլ. Ղուկ. հրատ. 412, 418։ Շահխ. Բ. 163, 183. Այրարատ Ալիշանի. 273, 292։ Գառնին եւ Հաւուց թառը նոյնպէս ենթարկուած էին նրանց իշխանութեան. Ջեռ. էջմ. N. 2838 գրուած է 1207 թուին Հաւոց թառում «ի մերոյ նահանկի տէրութեան Խոշաքի եւ Զաքարիայի որդոյ Նորին»։ Տես եւ «Հովիտ» 1910. 122։

Ե.

Ումեկի հետ Կարինից գաղթել էին, ըստ Վարդանի եւ ըստ Գանձակեցու, եւ Նորա ազգականները, ինչպէս տեսանք նախընթաց պրակում. Գանձակեցու մէջ այս տեղեկութիւնը չփոթ է բնագրի խանգարուած լինելու պատճառով. «հանդերձ որդւովքն Յովհաննաւ եւ Ստեփանոսիւ եւ եղբարբք իւրով» պէտք է ուղղել «հանդերձ որդւովքն Յովհաննու՝ Ստեփանոսիւ եւ եղբարբք իւրով», որ համապատասխան կը լինի միանգամայն Վարդանին(*)։ Ապա թէ ոչ Գանձակեցու խանգարուած խօսքերն այնպէս կարելի է հասկանալ, որ Ստեփանոս և Յովհաննէս Ումեկի որդիքն են, որոնց հետ եկել են և իւր հինգ եղբայրները, որ ոչ մի աղբիւրից չի հաստատւում։ Երգնկացուց տեսանք, որ Բարիմատինն է կաթուղիկէ եկեղեցու տէրը հօր մահուանից յետոյ, միւդեռ Յովհաննէս և Ստեփանոս անունով աւելի աւագ եղբայրներ ունենալու դէպքում, անկարելի կը լինէր Նորա ժառանգութիւնը տոհմի կեդրոնական, գուցէ և գերեզմանատան, եկեղեցուն։ Եւ յիրաւի մենք ունինք հաստատուն ապացոյցներ Յովհաննէսի, Նորա Ստեփանոս որդու և միւս եղբայրների մասին։

Լալուարի հիւսիսային ստորոտում մի շարք պատմական վայրեր կան շատ կարեւոր հնագիտական մնացորդներով և արձանագրութիւններով, որ դեռ ևս բանասիրութեան անյայտ են մնացած, դոցանից մէկն է Խոռակերտը, որ գտնւում է ներկայ Զանախչի հայ գիւղի մօտ, որի մասին Ջալալեան միայն հակիրճ յիշատակութիւն ունի(**)։ Այդ տեղ անտառի մէջ դեռ ևս կանգուն է Խոռակերտի գմբեթաւոր տաճարը իւր ուրոյն կառուցուածքով, գաւթի եւ շրջակայքի խաչքարերի հետ՝ բաւականաչափ ամբողջական եւ կիսեղծ արձանագրութիւններով, տաճարի արեւմտեան դրան գլխին, կիսաւեր գաւթի կողմից հե-

(*) Վերջին պահուն ծեռագիրների համեմատութիւնն էլ հաստատեց մեր դիտողութիւնը. Ղուկ. հրատ. մէջ տպագրական սխալ պէտք է համարել մէջբերուած ծեւով, ինչպէս եւ Յովհաննիսեանի հրատարակութեամբ՝ Մոսկուայում։

(**) Ա. 88։